



ՈՐՈՇ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՏԵՂԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես հայտի է Հայաստանում աշխարհագորայիններին կփոխարինեն տեղական պաշտպանության ուժերը: Այսպիսի որոշում է ընդունել կառավարությունը 2024 թվականի հոկտեմբերի 31-ի նիստում: Կառավարությունը փոփոխություններ է կատարել «Պաշտպանության մասին» օրենքում, որի համաձայն՝ աշխարհագորայինները կփոխարինվեն տեղի պաշտպանության ուժերով, որոնք կձևավորվեն ըստ այս կամ այն տարածաշրջանի գործառնային և կհամակարգվեն բանակային կորպուսների կողմից:

Ուստի, ելնելով վերոգրյալից, ստորև ձեզ են ներկայացվում պաշտպանության ուժերի ստղծման և պատրաստման որոշ խորհուրդներ:

Ինչպես հավաքագրել մարդկանց

Տեղական պաշտպանության ուժերի ջոկատ ստեղծելիս ամենակարևոր կանոնը այն մարդկանց հետ աշխատելն է, ում վստահում եք և ում վաղուց եք ճանաչում: Ի հարկե, սա չի երաշխավորում, որ ինչ-որ մեկը ճնշման ազդեցության տակ ամեն ինչ չի խոստովանի, բայց դա անպայման կօգնի:

Սկզբում, հավաքագրվողները պետք է գրուցեն նրանց հետ, ովքեր լավ բնագոյնն են խնդրահարույց մարդկանց տարբերելու համար: Մի տեսակ պատահաբար գրուցեք նրաց հետ՝ հասկանալու համար, թե որքան լավ են նորակոչիկները հասկանում իրենց պարտականությունները և բացահայտեք նրանց համոզմունքների խորությունը: Եթե ամեն ինչ լավ է ընթանում, խոսեք ակտիվ դիմադրության մասին: Սա կօգնի հասկանալ նորակոչիկի վերաբերմունքը հասարակական կարգի նկատմամբ և թույլ կտա բացահայտել ավելի խորը բարոյական խնդիրները:

Հարցազրույցն անցնելուց հետո հավաքագրվողները պետք է հրավիրվեն ջոկատի ժողովին: Ժողովից հետո ջոկատի անդամները պետք է արտահայտեն իրենց կարծիքը յուրաքանչյուր նորակոչիկի և նրաց հանդեպ իրենց վստահության մասին: Եթե կասկածներ կան, հավաքագրվողին նշանակեք առավել «անպատասխանատու» աշխատանքի, ինչպիսիք են ճաշ պատրաստելը, թղթաբանությունը և այլն, կամ ընդհանրապես բացառեք խմբից:

Կլինեն դեպքեր, երբ լսելով ձեր խմբի մասին նորանոր մարդիկ կգան հավաքագրվելու: Այդպիսիք կարող են անկեղծ լինել, և նրանց պետք է դիմավորել ջերմորեն: Բայց, այնուամենայնիվ, նրանք նույնպես պետք է թեստավորվեն և ստուգվեն, թե ովքեր են և ինչ են իրենցից ներկայացնում: Երբ հովհարիչը կմաքրվի փոշուց, ակնկալեք ջոկատի նոր անդամների մեծ ներհուսք, դա լրացուցիչ բեռ կլինի անվտանգության ընթացակարգերի համար, բայց մի լարվեք: Զբաղվեք ձեր պարտականություններով, և ամեն ինչ լավ կլինի:

Նոր անձնակազմը պետք է հարդարուն լինի ինչպես հրամանատարները և անընդհատ հիշեցումներ ստանա, որ կարող է գալ մի պահ, երբ նրանք ստիպված կլինեն ուրիշներին սովորեցնել այն, ինչ իրենք են սովորել: Հրամանատարության այս մեթոդը կոչվում է վայրընթաց պատրաստություն:

Քանի՞ մարտիկ կբավականացնի: Քանի՞սին կարող եք դեկավարել: Նյութատեխնիկական մատակարարումը, սնունդը և վարչական այլ խնդիրները բավականին լուրջ կդառնան նույնիսկ երկու տասնյակ մարտիկների դեպքում: Ձեր ջոկատի աճի հետ մեկտեղ պատրաստ եղեք մարդկանց ներգրավել ավելի յուրահատուկ պարտականությունների կատարմանը, ինչպիսիք են սովորական բանակում:

Ստեղծելով ձեր ջոկատը աշխատեք որակի և անկեղծության, այլ ոչ թե քանակի վրա:

Անվտանգություն

Անվտանգության միջոցների պահպանումը նվազագույնի են հասցնում բոլոր անակնկալությունները և դրանցից բխող հետևանքների հավանականությունը: Շտախոսները պատերազմում արագ են մահանում: Պահպանեք տեղեկատվությունը «յուրաքանչյուրը գիտի միայն այն, ինչ-որ ինքը պետք է իմանա» սկզբունքով: Ձեր մեջ պահպանեք կարևոր տեղեկությունները, հատկապես առաջիկա գործողությունների

վերաբերյալ: Ստուգեք նոր մարտիկներին «ոջլոտության» առումով: Հաղորդեք նրանց մի քանի «գաղտնի» տեղեկություններ և հետևեք, թե արդյոք մյուսները կիմանան այդ մասին, թե ոչ:

Անվտանգության միջոցառումների խստացումը պետք է լինի ամենաբարձր առաջնահերթություններից մեկը՝ նկատողությունների կիրառմամբ և պատիժների սահմանմամբ: Տեղեկությունների հրապարակումը հավասարազոր է հանցագործությանը:

Հետևեք, թե ինչ էք խոսում ռադիոյով և հեռախոսով: Համարեք, որ ձեր բոլոր հաղորդումներին հետևվում են նույնիսկ այն ժամանակ, երբ սպասման ռեժիմում եք:

Երբեք բացեիքաց մի քննարկեք ձեր գործունեությունը:

Ձեր ջոկատը կարող է քողարկվել որպես փեյնթբոլի¹ թիմ, որը կբացատրի կամուֆլյաժի կրումը: Հանդերձանքը, սաղավարտները և զենքերը պետք է բերվեն ուղեանդուկներում (в багаж): Խուսափեք ձեր տանը կամ մեքենայում արատավորող սարքեր կամ հանդերձանք պահելուց: Մա վերաբերում է նաև քարտեզներին և փաստաթղթերին:

Խուսափեք կանխատեսելի վարքից: Փոխեք օրերը, գիշերները, տեղորոշումը, ժամանակը, վայրը և մեթոդները, որոնք դուք օգտագործում եք:

Հանձնարարություններ կատարելիս, մի վերցրեք անձը հաստատող փաստաթղթեր, նույնականացման քարտեր, դրամապանակներ, բանալիներ և այն ամենը, ինչը կօգնի ձեզ ճանաչել:

Երդում

Պատմության ընթացքում գաղտնի խմբերի համախմբվածությունն ամրապնդում էին գաղտնիության և հավատարմության երդումներով: Շատ կարևոր է, որ ջոկատի անդամները ուղիղ և բացահայտ հայտարարեն միմյանց պաշտպանելու ցանկության մասին: Հոգեբանորեն, հավատարմության երդման ակտը շատ ավելի մեծ արժեք ունի, քան այն ենթադրելը: Երդման հիշողությունը կարող է ուժ տալ հակառակորդի հարցաքննության ժամանակ, երբ շատերը «լեզուները շաղ են տալիս»:

Ֆիզիկական պատրաստություն

Ֆիզիկական պատրաստությունը 24/7 գործընթաց չէ: Մարմինը պետք է անցնի երկու փուլ: Առաջին փուլով ամրապնդում ենք մարմինը, որը տևում է մոտ երկու շաբաթ, որից հետո վերականգնման համար տալիս ենք հանգիստ: Երկրորդ փուլը դանդաղ զարգացումն ու ֆիզիկական վիճակի բարելավումն է: Արյան շրջանառությունը բարելավվում է, և մարմինը դառնում է ավելի արդյունավետ: Մարմինը հասնում է արդյունավետության առավելագույն մակարդակին ամենօրյա վարժությունների շնորհիվ՝ 6-ից - 10 շաբաթվա միջակայքում: Ֆիզիկական վիճակի այս զագաթնակետը պետք է անընդհատ պահպանվի: Ֆիզիկական վարժությունները սկսեք կատարել յուրաքանչյուր վարժության 5 կրկնությամբ, մի քանի շաբաթվա ընթացքում աստիճանաբար ավելացրեք կրկնությունները մինչև 50 կամ 75: Միա-

¹ **Փեյնթբոլ**՝ մարզաձև, երբ երկու թիմերի բաժանված մարզիկները փորձում են իրար վրա կրակել գույն տվող հատուկ գնդիկներով:

վորեք այս վարժությունները ստանդարտ հրումներով, ձգումներով, վազքով և արգելագոտիների հաղթահարման անցումներով:

Հանդերձանք

Ստորև բերված է յուրաքանչյուր մասնակցի համար անհրաժեշտ նվազագույնը: Իդեալում, բոլորը պետք է ունենան առնվազն 2 այսլիսի հավաքածու՝ ճտկակոշիկներից մինչև սաղավարտ և պահեն դրանք տարբեր վայրերում: Փորձեք խուսափել բանակում առկա հանդերձանքի «տեսականուց» կամ զգուշորեն քողարկեք այն:

- Ճտկակոշիկներ (երկու զույգ),
- Գուլպաներ (բրդյա և բամբակյա, վեց զույգ),
- Ձեռնոցներ (կաշվե, բրդյա աստառով, երկու զույգ),
- Ներքնագգեստ (մի քանի զույգ),
- Դաշտային հագուստ ([O. D] կամ «Woodland» [Camo]), չորս լրակազմ)
- Ջրամեկուսիչ թիկնոց պանչո՝ աստառով,
- Դաշտային բաճկոն՝ աստառով,
- Եղանակին համապատասխան քնապարկ,
- Քնելու համար փոքր գորգ («փրփուր»՝ Գոբլին),
- Երկար վարտիքներ (երկու զույգ),
- Կնյարե կամ պողպատե սաղավարտ՝ աստառով,
- Բերետ և / կամ Պանամա,
- Հակամոծակային (հակամլակային) ցանց գլխի համար,
- Դեմքը քողարկելու հավաքածու (գրիմ, դիմակ կամ ածուխ),
- Ատրճանակի գոտի,
- Փամփուշտների գոտեպայուսակ,
- Ատրճանակ գոտիի կախուկներ,
- Անջրանցիկ փաթեթավորմամբ լուցկիներ,
- Ազդանշանային հայելակ,
- Ուսապարկ (ALICE pack) միջին (55լ) կամ մեծ (90լ),
- Սակրավորի բահ,
- Փամփուշտներ (նվազագույնը 360 փամփուշտ),
- Հակազագ,
- Կողմնացույց պատյանով,
- Լապտեր պահեստային մարտկոցներով,
- Մեկուսիչ ժապավեն (սև),
- Գոտկատեղի պայուսակի առաջին օգնության հավաքածու,
- Շվեյցարական դանակ (մուլտիտուլ),
- Մարտական դանակ (լայն շեղբով), .
- Անձնական հիգիենայի հավաքածու (օձառ, տուփ, սպունգ, սրբիչ, ատամի խոզանակ, ատամի մածուկ, եղունգների կտրիչ, սանր, շամպուն),
- Տենտ կամ վրան,
- Շարժական վառարան (sterno, hobo կամ այլ) (sterno՝ գելային, նախապես գնված վառելիքով, hobo՝ ձեռքի տակ գտնված նյութերից, օրինակ, որպես վառելիք՝ չոր սպիրտ, վառելափայտ – BN23-exSGA),
- Պարան (մոտ 7 մետր) (550 պարակորդ),
- Ռադիո (երկկողմանի AM / FM) պահեստային մարտկոցներով,

- Հեռադիտակ (7x35 նվագագույնը, ցանկալի է 10x50),
- Միջատներին վանող միջոց,
- Սննդի ընդունման հավաքածու (դանակ, պատառաքաղ, գդալ և այլն),
- Երկու տափշիչ ջերմամեկուսիչ ծածկոցներով,
- Գավաթ տափաշիչի համար,
- Ջրի մաքրման հաբեր,
- Ձեռքի ժամացույց:

Ծանոթագրություն: 1 Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ցուրտ և անձրևոտ եղանակի բարձրորակ հանդերձանքին: 2. Եթե Ձեզ բռնեն այս ամբողջ հավաքածուով, կարող են առաջանալ խնդիրներ, ուստի թաքցրեք այն իչքան հնարավոր է լավ:

Առաջին օգնության դեղատուփի հավաքածուի բովանդակությունը

- Ոտքերի կոշտուկների/բշտիկների սպեղանի,
- Օձի խայթոցների դեմ հավաքածու (Snake bite kit),
- Տգերի հեռացման միջոց,
- Սպեղանի (տարբեր չափերի՝ արյան մակարդեղիության, արյունահոսությունն արագ դադարեցնելու համար, ինչպես նաև հակաբակտերիալ ծածկույթով),
- Կանանց Kotex լայն միջադիրներ՝ լուրջ արյունահոսության դեպքում (արյունը լավ է կլանում և կարող է անհապաղ դրվել վերքի վրա),
- Բժշկական սեղմակներ (երկու գույգ, նոր, չօգտագործված) (Hemostats),
- Աչքի համար սպեղանի,
- Ստերիլ վիրակապ 5 սմ լայնությամբ,
- Էլաստիկ վիրակապ ամրակներով,
- Բետադինի քսուք (1 տյուբիկ),
- Կալադրիլի քսուք (1 տյուբիկ):

Ձեռք

Պատմությունը, թե ինչպես Մառ Յզե Դունը ձեռք բերեց բավարար քանակությամբ զենք և պաշարներ ճապոնական բանակը ջախջախելու համար, պետք է անընդհատ կրկնվի տեղական պաշտպանության ուժերի յուրաքանչյուր անդամի:

Մառն, երբ իմացավ, որ թշնամին լավ սպառազինված է և ունի մեծ քանակությամբ պաշարներ, կիրառեց ավագակային տրամաբանություն ու քաղաքական հոգեբանություն, ասելով՝ «որտեղի՞ց է Չինաստանը զենք և պաշարներ վերցնելու ազատության համար պատերազմ վարելու համար: Մենք այդ ամենը կվերցնենք ձեզանից»: Եվ նա այդպես էլ վարվեց: Մառյի զինվորներն այնքան բան խլեցին Չան Կայ Շիի զորքերից, որ նրան, իր իսկ դժգոհության համար, անվանեցին «մեր պահեստապետը»:

Եթե թշնամին ունի այն, ինչ ձեզ հարկավոր է, գնացեք և վերցրեք այն:

Հավաքեք և ուսումնասիրեք զենքի վերաբերյալ բանակային հրահանգները:

Դուք պետք է առաջնորդվեք հետևյալով.

- Հե՞շտ կլինի ձեր զենքի պահեստամասերը գտնելը:

▪ Երբ ձեր փամփուշտները սպառվեն, ձեր զենքը կարո՞ղ է օգտագործել ՀՀ ԶՈՒ-ի փամփուշտները:

▪ Եթե նոր եք սկսել տիրապետել զենքերին, ապա առավել ուշադիր եղեք պոտենցյալ հակառակորդի զենքին, որը նախատեսված է 5.56մմ և 7.62մմ տրամաչափի ՆԱՏՕ-ի փամփուշտների համար:

▪ Ավտոմատ-ատրճանակները պետք է աշխատեն 9 մմ տրամաչափի փամփուշտներով (9*19 «Parabellum»):

Մարզումների համար սկզբունքորեն հարմար է ցանկացած տրամաչափ, բայց մի ընտելացեք միայն դրանց:

Հրատեխնիկայի հիմունքներ տեղական պաշտպանության ուժերի մարտիկների համար

Դուք կբախվեք մեծ քանակությամբ զինամթերքի, բայց ավելի լավ է կարողանաք ինքներդ ինչ-որ բան պատրաստել: Ստորև նկարագրված են «ծնկի վրա հավաքված» զենքի երկու տեսակ, որոնք բոլորը կարող են պատրաստել:

ՏԵՐՄԻՏ

Տերմիտը, վառելիքի օքսիդացնող նյութ է, որն օգտագործվում է հսկայական ջերմաստիճան առաջացնելու համար: Դա երկաթի օքսիդի (ժանգի) և ալյումինի խառնուրդ է, որոնք փոշու աստիճանի աղացած են: Երբ այն հրկիզվում է, ալյումինը այրվում է և երկաթի օքսիդից թթվածին է արձակում: Ռեակցիայի ժամանակ արձակվում է 2200 աստիճանի կարգի ջերմաստիճան, որը ատոմային ռումբի պայթյունի ժամանակ արձակված ջերմաստիճանի կեսն է: Այն դժվար է հրկիզել, սակայն, երբ այն ի վերջո բռնկվում է, դառնում է մետաղը հալեցնող ամենաարդյունավետ նյութերից մեկը :

Տերմիտ պատրաստելու համար հատուկ ոչինչ չի պահանջվում: Պարզապես խառնեք երկու փոշիները միասին և փորձեք խառնուրդը հնարավորինս դարձնել միատարր: Տարրերի հարաբերակցությունն 50/50 ըստ քաշի կարելի է պատրաստել ցանկացած քանակությամբ (կան տարատեսակություններ խառնելով 2 մաս երկաթի օքսիդը 1 մաս ալյումինի հետ):

Ժանգի չափաբաժին պատրաստելու հեշտ միջոց.

▪ Հաստատուն հոսանքի աղբյուրներ: Էլեկտրական գնացքի տրանսֆորմատորը գերազանց է:

▪ Կցեք դրական լարը սովորական մեխին հատուկ սեղմիչի միջոցով:

▪ Ընկղմեք մեխը բաժակով ջրի մեջ:

▪ Բացասական լարն իջեցրեք ջրի մեջ (սկոչով ամրացրեք բաժակի եզրին):

▪ Այդ վիճակում «ժանգի ֆաբրիկան» թողեք ամբողջ գիշեր: Առավոտյան բաժակի մեջ մուգ կարմիր հեղուկ կլինի: Զտեք այն սովոր նյութի (կտոր, գործվածք) միջով և թողեք չորանա:

Տերմիտի բռնկիչը կարելի է պատրաստել.

▪ Հրավառության համար նախատեսված պատրույզից, տեղադրելով տերմիտի մեջ:

▪ Լցնելով փորակում դյուրավառ մագնեզիում՝ որպես բռնկիչ:

Փաթեթավորումը: Տերմիտը կարելի է օգտագործել որպես ազատ վառող, լցնելով անհրաժեշտ տեղում, դնել պայուսակում կամ 5 սմ տրամագծով ալյումինե

խողովակից պատրաստելով pipe-ռումբեր: Յուրաքանչյուր գործի համար օգտագործեք առնվազն 100 գ:

Կիրառման նպատակները: Օգտագործեք մեքենաների շարժիչները, ականանետերի և թնդանոթների փողերը, էլեկտրական վահանակները, զենքի և զինամթերքի պահեստները շարքից հանելու կամ ցանկացած այլ վայրում, որտեղ ձեզ հարկավոր է անդառնալի վնաս պատճառել:

ՄԽԱԳԼԱՆԱԿ SHOOTINGEGGS-ից (metacafe.com/channels/shootingeggs)

Արտադրության համար ձեզ հարկավոր են հետևյալ բաղադրիչները.

- 1) կալիումի նիտրատ (վաճառվում է այգեգործական խանութներում),
- 2) շաքարավազ,
- 3) սննդային սոդա,
- 4) օրգանական ներկի փոշի:

Խառնում ենք կալիումի նիտրատը և շաքարը (60 գ նիտրատ 40 գ շաքար): Խառնուրդը դնում ենք մարմանդ կրակին և խառնում: Շաքարավազը պետք է սկսի հալվել և վերածվել կարամելի: Շարունակեք խառնել, մինչև խառնուրդը նմանվի ընկույզի կարագի: Որից հետո ավելացրեք 1 թեյի գդալ սոդա: Այն կդանդաղեցնի այրումը: Ավելացրեք 3 ճաշի գդալ ներկ փոշին (նարնջագույնը կամ կապույտը հիանալի են): Փութաջան խառնեք մինչև հավասարաչափ գունավորված, համասեռ զանգված ստանալը: Լցրեք խառնուրդը ստվարաթղթից (картон) պատրաստված խողովակի (մոտավորապես 4-5 սմ տրամագծով) մեջ: Գլանի առանցքի երկայնքով, կենտրոնում, խրեք բարակ գրիչ կամ մատիտ: Թողեք 1 ժամ, որ պնդանա: Դրանից հետո, նրբորեն հանեք գրիչը կամ մատիտը: Արդյունքում առաջացած անցքի մեջ տեղադրեք հրավառության բռնկիչը և ամրացրեք այն բամբակյա կտորով: Խնամքով փաթաթեք գլանակը մեկուսիչ ժապավենով (изолента)՝ թողնելով մի փոքր անցք, այնտեղ, որտեղ գտնվում է բռնկիչը, որպեսզի ծուխը դուրս գա: Գլանակը պատրաստ է:

Ծխազլանակի բռնկիչի պատրաստումը.

Հարկավոր է հեղուկների համար նախատեսված ձողիկներ (երկարությունը գլանակի բարձրությունից պակաս, իդեալում, գլանակի 2/3 չափով): Այն լցնում ենք լուցկիների գլուխիկների ծծումբով և զմռսում բամբակյա կտորներով: Հաջորդը, ձողիկը բոլորապատում ենք ամբողջական լուցկու հատիկներով այնպես, որպեսզի լուցկիների գլխիկները և բամբակյա կտորները, որով ձողիկը զմռսված է, ուղիղ նայեն ձողիկի վերջնամասին: Ֆիքսում ենք մեկուսիչ ժապավենով (изолента): Ստացվում է բռնկիչ: Այնուհետև, լուցկու տուփից կտրում ենք երկու «չրըխկացնող» մաս: Սկրեպներից պատրաստում ենք պոչիկով օղակ: Պոչիկին ամրացնում ենք լուցկու տուփի «չրըխկացնող» մասը՝ թեք կողմը դեպի ներս և ֆիքսում ենք մեկուսիչ ժապավենով (изолента): Որից հետո, բռնկիչը տեղադրում ենք լուցկու տուփից կտրված «չրըխկացնող» մասերի միջև այնպես, որպեսզի լուցկու գլխիկները կիպ հպվեն նրանց և ամուր փաթաթում ենք գրասենյակային ռետինե ժապավենով: Արդյունքում ստացված բռնկիչը տեղադրում ենք ծխազլանակի մեջ, պատրույզի համանմանորեն: Պատրաստի գլանակը տեղադրում ենք ևս մեկ ստվարաթղթե (картон) խողովակի մեջ և խնամքով փաթաթում ենք մեկուսիչ ժապավենով (изолента):

Կիրառումը: Կտրուկ քաշեք օղակը, որը կվառի լուցկիներով բոլորապատված ձողիկը, և շղթայական ռեակցիայի միջոցով ձողիկի ներսում գտնվող ծծմբական գլխիկները կբռնկվեն՝ ծխազլանակը կվառվի ու կսկսի ծուխալ:

Կապը մարտում

Կապը մարտում առավել կարևոր ասպեկտներից մեկն է: Հակառակորդն ունի բազմաթիվ սկաներներ, խլացուցիչներ և ռադարներ: Նրանք high-tech տեխնոլոգիաներ են, ուստի մենք կլինենք «low-tech»:

Նորմանդիայում վայրէջք կատարելիս՝ «Օր D-ում», զինվորները ապավինում էին մանկական խաղալիքին, որը կոչվում էր Կրիկետ, որպես պարզունակ մեթոդի յուրային-օտար նույնականացման համար: Այն «clik-clak» ձայն էր արտաբերում և ուներ ծածկագիր, մեկ «clik-clak»-ը որպես կանչ, երկու «clik-clak»-ը որպես պատասխան: Այս ծածկագիրը կարող է հեշտությամբ հարմարեցվել ձեր խմբի կարիքներին:

Գաղտնաբառերը, հայելիները և նույնիսկ ծխի բազմազույն ազդանշանները կարող են տեղեկատվություն փոխանցել մարտադաշտից: Ստեղծեք ձեր սեփական կոդերը և հաճախ փոխեք դրանք:

Ռազմավարություն և մարտավարություն (դաշտային և քաղաքային)

Ռազմավարություն

Ստորև բերված ռազմավարությունը հաստատել է իր արդյունավետությունը պարտիզանական պատերազմներում:

- Երբ թշնամին գալիս է, մենք հետ ենք քաշվում:
- Երբ թշնամին հանգստանում է ճամբարում, մենք անհանգստացնում ենք նրանց:
- Երբ թշնամին հոգնում է, մենք հարձակվում ենք:

Մարտավարություն

* Ճանաչեք ձեր հակառակորդին: Ուսումնասիրեք հակառակորդի բանակային և այլ ուժային կառույցների կառուցվածքը: Իմացեք հակառակորդի ուժերի քանակն ու նրանց կրակային հզորությունը: Իմացեք հակառակորդի արձագանքի ժամանակը և նրա մատակարարման ուղիները (խոսքը վերաբերվում է նաև այն պաշարներին, որոնք կարող են օգնության հասցվել դարանակալվածներին): Իմացեք նրանց ուժեղ ու թույլ կողմերը: Սովորեք ճանաչել նրանց տրանսպորտային միջոցները և վերահսկեք նրանց հաղորդակցության ուղիները: .

* Հարվածեք հակառակորդի թույլ կետերին: Թշնամին չի կարող ուժեղ լինել ամենուր: Փնտրեք և կգտնեք համապատասխան թիրախները:

* Հարձակվեք, երբ հաղթելու 95% հավանականություն ունեք: Լավ հետախուզությունը, գերազանցող կրակային ուժը, արագությունը, ժամանակի ընտրությունը և հարձակման վայրերը մեծացնում են հաջողության հավանականությունը:

* Խուսափեք կրկնությունից: Երբ մեթոդն աշխատում է, կիրառեք այն: Բայց հնարավորիս գերծ մնացեք նույնատիպ գործելակերպից: Փոփոխեք ձեր արտաքին տեսքը, ձեր տրանսպորտային միջոցները, մատակարարման եղանակները, մոտեցման/նահանջի ուղիները և հարձակման թիրախների տեսակները:

* Հարձակվեք այնտեղ, որտեղ ձեզ ամենաքիչն են սպասում: Մեկ անգամ չէ, որ կարևոր թիրախը (օբյեկտը) թույլ է պաշտպանված եղել: Փնտրեք ինքնավստահ, ծառայությունից հոգնած պահակներին, ովքեր կորցրել են իրենց զգոնությունը:

* Առանց վարանելու օգտագործեք ձեր ամենաուժեղ զենքը: Երբ սկսվի հրաձգությունը՝ չհապաղեք: Նշանառեք արյունադարձ երակին:

* Միշտ գերազանցեք թշնամուն: Պարտվածը կարող է կարեկցանք առաջացնել, բայց ոչ ծափահարություններ:

* Մարտում սահմանափակվեք երեք բույներով: Ավելի երկար հրաձգությունը հակառակորդին թույլ կտա կապի միջոցներով օգնություն խնդրել, և ստիպված դուք եք պաշտպանության անցնելու: Կրակեք և խուսանավեք:

* Խուսափեք պաշտպանվելուց: Պաշտպանական դիրքն այն դիրքն է, որի վրա թշնամին փակել է ձեզ: Կամ հարձակվեք կամ նահանջեք: Եթե դուք հարձակման եք ենթարկվել, օգտագործեք ձեր ամենահզոր զենքը, հետ մղեք հարձակումը և վերատեղաբաշխվեք:

* Թշնամուն տեղաշարժվելու կամ որոշումներ կայացնելու ազատություն մի տվեք: Շարժունակությունը բանակի կյանքն է: Կորցրել եք այն՝ կորցրել եք հաղթանակը:

* Թույլ մի տվեք, որ թշնամին գործողի զենքը: Դա ձեզ կստիպի պաշտպանվել: Արագ աշխատեք:

* Միշտ պատրաստեք տրանսպորտի և օգնական ուժի ռեզերվ: Երբ թշնամին հոգնի, նրան վերջ տալու համար, կիրառեք ռեզերվը:

* Պատրաստ եղեք անակնկալների: Անախորժությունները թռացրիվ են լինում, ինչպես արտաթորանքը հովհարիչից: Եղեք ճկուն, սթափ արձագանքեք իրավիճակի փոփոխությանը:

* Երբեք մի գործադրեք անձնակազմը և ռեսուրսները միայն հարձակվելու համար: Վերլուծեք պատերազմը և մարտական իրավիճակը որպես ամբողջություն, գտեք վճռական նպատակները և հասեք դրանց:

Առաջադրանքի պլանավորում և իրականացում

Նախքան առաջադրանքի գնալը:

* Տեղանք: Ուսումնասիրեք քարտեզը: Նշեք մարտավարական կարևոր տարրերը: Նշեք դիտարկման և ապաստանի դիրքերը, ճանապարհներն ու գրունտային ճանապարհները: Գետերը՝ լայնությունը, խորությունը, ուղղությունը, ստորջրյա խութերը: Կամուրջներն ու անցահունները: Անցումները ճահիճուտներում: Անտառներն ու թավուտները: Խոչնդոտող բուսածածկույթները՝ մոշի, մասուրի թփեր և այլն: Չյան և սառույցի հաստությունը և պնդությունը:

* Եղանակ: Լուսնի փուլ: Արևածագի և մայրամուտի ժամանակը: Առաջադրանքի կատարման ընթացքում սպասվող ցերեկային և գիշերային օդի ջերմաստիճանը:

* Հակառակորդ: Ուժերը, տեղաբաշխվածությունը, գործողությունները ցերեկային և գիշերային ժամանակահատվածում: Զենքը, դաշտային ամրությունները, արգելապատնեշները, ականապատ դաշտերը, ժամապահները, տեղադրված ազդանշանիչները: Ազդանշանային հրթիռների կիրառումը և նշանակությունը: Պարեկները, նրանց աջակցությունը (հրետանի, ավիացիա): Տրամադրությունը, մարտական ոգին, առանձնահատկությունները: Գերեվարել, թե ոչ:

* Քաղաքացիական անձիք: Առկայությունը: Վերաբերմունքը: Համագործակցելու պատրաստակամությունը, վստահության աստիճանը: Տագապ առաջացնող իրավիճակները՝ ընտանի կենդանիների (շների հաչոց) և այլն:

* Յուրային ուժեր: Այլ խմբերի ակտիվությունը: Կրակային աջակցությունը: Այլ աջակցություն՝ տրանսպորտ, կապ, բժշկություն: Պարեկներ, անցատեղիներ ականապատ դաշտերում:

* Հանդերձանք և մատակարարում: Հատուկ սպառազինություն և սարքավորումներ, օպտիկական նշանոցներ, ռադիոկայաններ, հեռադիտակներ, կծաքցաններ, պարաններ, ականոքսիչներ, գիշերային տեսանելիության սարքեր: Զինամթերք, հրատեխնիկա, ջուր, գոդման սարքեր:

* Ղեկավարում: Արձագանք և գաղտնաբառ: Պայմանական ծածկագիր: Կողմնորոշիչներ և անցակետեր: Հաղորդագրություններ՝ ե՞րբ և որտե՞ղ: Պլան Ա, Բ, Գ:

* Կազմեք նախնական պլան: Քարտեզը ուսումնասիրելիս համոզվեք, որ տվյալները հնացած չեն: Հաշվի առեք հակառակորդի գործունեությունը և դրա ազդեցությունը առաջադրանքի վրա: Որոշեք կրակի և այլ աջակցության անհրաժեշտությունը: Ընտրեք ուժեր պարեկելու համար: Որոշեք սպառազինության, զինամթերքի, հատուկ հանդերձանքի քանակ:

* Դաշնակիցների հետ փոխգործողությունը: Այլ ջոկատներ, կողմնակիցներ և այլ աջակցություն: Եթե դա անհրաժեշտ է և հնարավոր, համոզվեք, թե արդյոք նրանք գիտեն ձեր երթուղին, նպատակները և գործողությունների ծրագիրը, պատահական կրակոցներից և գոհերից խուսափելու համար:

* Ընտրեք անձնակազմ: Հրամանատարի համապատասխան տեղակալ: Մարտունակ և լավ վիճակում գտնվող մարտիկների նվազագույն անհրաժեշտ թիվաքանակ: Ոչ մի մրսածություն, փոշտոց կամ հագ, առանց քնկոտների: Անհրաժեշտության դեպքում՝ լավ լողորդներ, թարգմանիչներ: Բժիշկ: Ուցեկցող:

* Տվեք նախնական կարգադրություն: Անձնակազմին տեղեկացրեք, որ նախատեսված առաջադրանքի կատարումը պայմանավորված է հստակ ժամանակացույց իրագործման հետ: Համառոտ նկարագրեք իրավիճակը: Պարեկության կարգը: Ցուցումներ բոլորին՝ զենքի, հանդերձանքի, հագուստի ձևի, նույնականացման նշանների հեռացման, հատուկ միջոցների, զինամթերքի, չափաբաժինների վերաբերյալ: Քողարկումը: Հրամանատարի տեղակալը: Առաջադրանքը կատարողների կազմը: Հավաքման ժամանակը:

* Գնահատեք հետախուզական տվյալները: Հանդիպեք տեղակալին: Համադրեք նախնական պլանը հակառակորդի տեղանքի, իրավիճակի, հնարավորությունների հետ: Ընտրեք մոտեցման/ելքի այլընտրանքային ուղիներ: Գիշերային գործողությունների համար ուրվագծեք հիշարժան կողմնորոշիչներ:

* Ավարտեք պլանը: Մտածեք տարբերակների և չնախատեսված իրավիճակների մասին: Եթե ժամանակ ունեք, պատրաստեք տեղանքի մոդել՝ ձեր պլանը ստուգելու համար: Համոզվեք, որ վիրավորներին կարող են ինամել: Համաձայնեցրեք հավաքման կետերի հետ կապված բոլոր հարցերը: Նշումներ կատարեք պարեկության հրամանի համար:

* Վերջնական համաձայնեցում: Ականանետներ, հրետանի, դաշնակիցների ուղեկալները: Թարմ հետախուզական տվյալներ: Լրացուցիչ հատուկ հանդերձանք:

* Պարեկության հրաման տվեք: Պարեկային ծառայության հրամանատարը նախ նկարագրում է տեղանքը, ապա հանձնարարություն է տալիս կատարել առաջադրանքը: Մարզում: Գիշերային պարեկության համար՝ և ցերեկը, և գիշերը, շեշտը դնելով անձնակազմի կողմից երթուղու, հավաքման կետերի ուսումնասիրության վրա: Ինչ անել հակառակորդի հետ բախվելիս, ինչպես կատարել առաջադրանքը: Ինչպես կողմնորոշվել տեղանքում, կողմնացույցով, աստղերի միջոցով, ինչպես և երբ գիշերը կրակ բացել:

* Ստուգեք պարեկներին: Դեմքերի ու հանդերձանքի քողարկվածության աստիճանը: Թևքերն ու տաբատները փաթաթված կամ կապած պետք է լինեն: Աղմուկի

բացակայությունը ստուգելու նպատակով բոլորը պետք է տեղում ցատկեն: Բացառել արտացոլվող և շողշողացող առարկաները: Տափաշները պետք է լցված լինեն: Ռադիոկայաններում լիցքավորված մարտկոցների առկայությունը, ալիքների կարգավորվածությունը: Կողմնացույցները պետք է ճիշտ ուղղություն ցույց տան: Ժամացույցերը պետք է սինխրոնիզացված լինեն: Այլ հանդերձանքը առկա է և պատրաստ է օգտագործման:

* Կատարել մարտական խնդիրը: Եկա-տեսա-հաղթեցի:

* Ձեկույց առաջադրանքի կատարման վերաբերյալ: Կիսվեք նոր տեղեկություններով ձեր սպաների, անհրաժեշտության դեպքում, դաշնակիցների հետ: Հրապարակեք քարոզչական նյութեր՝ հստակեցնելով պատճառված վնասի և թշնամու իրավիճակի հուսահատության վերաբերյալ:

Աշխատանք տեղի պաշտպանության ուժերի այլ ջոկատների հետ

Հաճախ տեղական պաշտպանական ուժերի ջոկատների մեջ կան այնպիսիները, որոնց մենք անվանում ենք «ուզում ենք հրամանատար լինել»: Նրանց առաջնորդների նպատակները թշնամու դեմ պայքարի այն կողմում են և գտնվում են սովորական քաղաքականության դաշտում: Այս տղամարդկանցից և կանանցից շատերն ունեն ուշագրավ հմտություններ և առողջ քաղաքական միտք, մյուսները շատ կգարմանան՝ իմանալով, որ իրենց տեղերում կյանքը քիչ է տարբերվում օկուպացված տարածքում գոյություն ունենալուց:

Ջոկատները դուրս են գալիս դաշտ և հանդիպում անձանթ ջոկատների: Երբ բախվում եք տեղական պաշտպանական ուժերի նոր ջոկատների, դուք պետք է հանդիպեք նրանց ղեկավարներին և որոշեք, ո՞ր տարածքում են նրանք գործում, որո՞նք են նրանց հնարավորությունները: Արդյո՞ք նրանք լավ են կազմակերպված, մարզված, զինված, ինչպիսի՞ն է հրամանատարությունը:

Անվտանգությունը կարևոր է: Ու՞մ կողմն են նրանք՝ անհայտ է: Եվ դուք ստիպված եք վստահել ձեր կռահողությանը՝ որոշելով, թե ինչով կիսվել և ինչ թաքցնել: Եթե ձեր երկու խմբերի միջև հարաբերությունները լավացել են, դուք կցանկանաք ընդլայնել համագործակցությունը և միասին պայքարել: Ծանր սպառազինության օգտագործումը թույլ կտա խնդիրները լուծել նվազագույն կորուստներով: Սակայն, արդյունավետ կիրառման համար, դա պահանջում է ուսուցում և պրակտիկա: Եթե դուք չեք կարող համագործակցել մեկ այլ պաշտպանական ուժի հետ և չեք ցանկանում թշնամանալ նրանց, ամեն ջանք գործադրեք չեզոքության հասնելու համար և ձեր ուշադրությունը կենտրոնացրեք թշնամու դեմ պայքարելուն: Թողեք քաղաքական փաստարկները քանի դեռ «Բաբելոնը չի ընկել»:

Շրջապատումից դուրս գալը

Հնարավորինս շուտ դուրս եկեք շրջապատից: Որքան երկար եք սպասում, այնքան ուժեղանում է թշնամին: Մարտակարգը ձևավորեք եռանկյունու տեսքով: Մա լավ է աշխատում 5-ից 20 հոգանոց խմբերի համար: Եթե դուք զինված եք ինքնաձիգերով և ձեռքի գնդացիներով, ապա հրաձիգներին տեղադրեք առաջին երկու շարքերում, իսկ կարաֆիններով կամ կիսաավտոմատ զենքերով հրաձիգներին՝ թիկունքի ծածկույթն ապահովելու համար:

Երբ որոշեք շրջապատումը ճեղքել, օգտագործեք մարտական և ինքնաշեն նոնակները ճակատի թևերի և թիկունքի երկայնքով: Պայթյուններից անմիջապես հետո առաջին շարքն առաջ է շարժվում՝ կրակ վարելով այնքան ժամանակ մինչև պահեստատուփերը դատարկվեն: Այնուհետև նրանք պառկում են և վերալիցքավորում պահեստատուփերը, այդ ժամանակ երկրորդ շարքն է առաջ շարժվում՝ ավտոմատ կրակ վարելով: Հրաձգությունը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ բոլորը դուրս չեն եկել շրջապատումից:

Աղբյուրը՝ [How to Start & Train a Militia Unit PM 8-94](#)